ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԵՐԵՎԱՆԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԵՎ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարիքների համար Երևան քաղաքում մաքսային և լոգիստիկ կենտրոն կառուցելու նպատակով 2025 թվականի սեպտեմբերի 19-ին Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի միջև կնքվել է վարկային համաձայնագիր (այսուհետ՝ Համաձայնագիր), որով նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը հատկացնել 39.0 մլն եվրո (վարկային միջոցները նախատեսվում է հատկացնել 2 տրանշով՝ Տրանշ 1 - 30.0 մլն և Տրանշ 2 – 9.0 մլն): Ծրագրի իրականացման համար նախատեսվում է նաև դրամաշնորհային միջոցների՝ 6.0 մլն եվրո հատկացում, որի համաձայնագիրը նույնպես կնքվել է նույն օրը:

Միաժամանակ նախատեսվում է Հայաստանի Հանրապետությանը հատկացնել որոշակի գումար, որն ուղղվելու է ծրագրի իրականացման տեխնիկական աջակցությանը (մոբիլիզացմանը)՝ որպես դրամաշնորհ:

Վարկային և դրամաշնորհային համաձայնագրերի ֆինանսական միջոցներում ներառված չէ ՀՀ կառավարության համաֆինանսավորման մասը, որն ուղղվելու է ՀՀ-ում ԱԱՀ-ի գծով պարտավորությունների վճարմանը: ՀՀ կառավարության կողմից վարկային ու դրամաշնորհային միջոցների համաֆինանսավորման չափը կկազմի 9.0 մլն եվրո, որից՝ 7.8 մլն եվրոն վարկային միջոցների գծով (Տրանշ 1 – 6.0 մլն և Տրանշ 2 – 1.8 մլն), իսկ 1.2 մլն եվրոն՝ դրամաշնորհային միջոցների գծով:

Համաձայնագրով նախատեսված վարկային միջոցներն ուղղվելու են Երևանի ԱՏԳ կենտրոնի շինարարական աշխատանքների իրականացմանը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերմանը, ինչպես նաև խորհրդատվական ծառայությունների մատուցմանը, իսկ դրամաշնորհային միջոցները՝ Երևանի ԱՏԳ կենտրոնի շինարարությանը և սարքավորումների ձեռքբերմանը:

Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է կառուցել արտաքին տնտեսական գործունեության կենտրոն (այսուհետ՝ ԱՏԳ) և ՀՀ ՊԵԿ վարչական շենք (վարչական շենքի կառուցման ծախսերն իրականացվելու է ՀՀ պետական բյուջեի ներքին աղբյուրների հաշվին), որի ընդհանուր մակերեսը կազմում է 19.1 հա: 13.5 հա-ն նախատեսվում է ԱՏԳ կենտրոնի և դրա ենթակառուցվածքների համար, իսկ 5.6 հա-ն՝ վարչական շենքերի և դրանց ենթակառուցվածքների համար:

Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի ստեղծումը հանդիսանում է ներկայումս որդեգրված՝ ԱՏԳ կենտրոնների ստեղծման ծրագրի բաղկացուցիչ մասը:

ԱՏԳ կենտրոններում ապրանքների ներմուծման և արտահանման գործընթացներն իրականացվում են մեկ վայրում: Այստեղ հիմնական գործընթացները հիմնված են լինելու

էլեկտրոնային համակարգերի և ծրագրային լուծումների կիրառման վրա: Այս կենտրոններում պետք է տեղակայված լինեն բոլոր այն պետական մարմինները և մասնավոր կազմակերպությունները, որոնք տրամադրում են ապրանքների ներմուծման և արտահանման համար անհրաժեշտ թույլատվական փաստաթղթեր:

Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա ԱՏԳ մասնակիցներին մատուցել բարձրակարգ ծառայություններ և ապահովել մաքսային հսկողության համար անհրաժեշտ արդյունավետությունը:

ԱՏԳ կենտրոնում նախատեսվում է կառուցել

- ✓ պահեստային (տանիքում արևային էլեկտրակայանի տեղադրմամբ), զննման, բեռնա-թափման մասնաշենք՝ մոտ 9000 քմ,
- ✓ ԱՏԳ կենտրոնի սպասարկման սրահ և վարչական մաս՝ 2 ստորգետնյա (պատսպարման վայր) և 2 վերգետնյա հարկերով՝ մոտ 2100 քմ,
- ✓ բեռնատար տրանսպորտային միջոցների ավտոկայանատեղի՝ 408 ավտոմեքենայի համար,
- ✓ ամբողջ կենտրոնի համար օրվա կարգավորիչ հակահրդեհային ջրամբար և պոմպակայան՝ մոտ 1000 քմ,
- ✓ երկհարկանի լաբորատորիա՝ 700 քմ ընդհանուր մակերեսով,
- ✓ ճառագայթային զննման սարքի հարթակ, կարգո և հավաքական բեռների զննման մասնաշենք՝ 2100 քմ,
- ✓ արգելապահվող տրանսպորտային միջոցների կայանատեղի՝ 28 ավտոմեքենայի համար:

Վարչական տարածքում նախատեսվում է կառուցել նաև Կոմիտեի գլխավոր մասնաշենք՝ 34,000 քմ կառուցապատման մակերեսով, ճաշարան անձնակազմի համար՝ 700 քմ, պահեստ, կաթսայատուն, տրանսֆորմատորային ենթակայան՝ 1000 քմ, ավտոկայանատեղի քաղաքացիների համար՝ 3000 քմ, ավտոկայանատեղի աշխատակիցների համար՝ 4000 քմ, ճանապարհներ և այլ օժանդակ շինություններ:

Ինչ վերաբերում է ապրանքաշրջանառության ծավալներին, ապա սահմանային անցման կետերից դեպի Երևանում տեղակայված մաքսային սպասարկման ժամանակավոր պահպանման պահեստներ (տերմինալներ) 2023թ և 2024թ. ընթացքում լրացվել է համապատասխանաբար՝ 80354 հատ (մեկ օրվա ընթացքում առավելագույնը 714) և 70901 հատ (մեկ օրվա ընթացքում առավելագույնը 573) ТТ ИМ (մուտքի մաքսային մարմնից դեպի ներքին մաքսային մարմին փոխադրման) տեսակի տարանցման հայտարարագիր: Միաժամանակ, Երևանի մաքսային սպասարկման կենտրոն-վարչությունում իրականացվել է սահմանային անցման կետերից դեպի Երևանում տեղակայված մաքսային սպասարկման ժամանակավոր պահպանման պահեստներ 2023թ շուրջ 71715, իսկ 2024թ շուրջ 70017 բեռնատար տրանսպորտային միջոցներով տեղափոխված բեռների հսկողություն, սպասարկում և մաքսային ձևակերպում:

Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնը տեղակայվելու է ՀՀ Կոտայքի մարզի Նաիրի համայնքի Պռոշյան գյուղի Գևորգ Չաուշի խճուղի թիվ 5 հասցեում:

Ընդհանուր առմամբ, Կենտրոնի ստեղծմամբ հնարավորություն կընձեռվի ունենալ բավարար մաքսային ենթակառուցվածք թե՛ շենքային պայմանների, թե՛ տեխնիկական հագեցվածության և թե՛ տեղեկատվական համակարգերի հասանելիության տեսանկյունից: Երևանի մաքսային և լոգիստիկ կենտրոնի ստեղծումը հնարավորություն կտա ԱՏԳ մասնակիցներին մատուցել բարձրակարգ ծառայություններ՝ «Մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքով և ապահովել մաքսային հսկողության համար անհրաժեշտ արդյունավետություն:

Համաձայնագրի **վարկավորման պայմանները**ը հետևյալն են.

- վարկի գումար՝ 39 մլն եվրո,
- վարկի արժույթ՝ եվրո,
- Ծրագրի իրականացման համար ԵՄ Հարևանության ներդրումային հարթակից (EU NIP) կտրամադրվի 6 մլն եվրո դրամաշնորհ,
- վարկը տրամադրվելու է երկու տրանշով, Տրանշ 1՝ 30 մլն եվրո, Տրանշ 2՝ 9 մլն եվրո,
- վարկի տոկոսադրույքի տեսակ՝ լողացող,
- վարկի տարեկան տոկոսադրույք՝ 6-ամսյա Euribor + 1% մարժա,
- վարկի սպասարկման գծով վճարումների հաճախականություն՝ կիսամյակային,
- միանվագ կոմիսիոն վճար՝ վարկի գումարի 1%-ի չափով, որը ենթակա է վճարման վարկային միջոցների հաշվին՝ առանձին յուրաքանչյուր տրանշի համար՝ ուժի մեջ մտնելու կամ հասանելի դառնալու ամսաթվին կամ դրանից հետո 7 օրվա ընթացքում,
- պարտավորության վճար՝ տարեկան 0.5% դրույքաչափ, որը հաշվարկվում է վարկի չմասհանված գումարի նկատմամբ՝ սկսած Համաձայնագրի ստորագրումից 60 օր հետո՝ Տրանշ 1-ի համար, և հասանելի դառնալուց հետո 60 օր հետո՝ Տրանշ 2-ի համար:
- վարկի մայր գումարի մարումները կատարվելու են 22 հավասարաչափ կիսամյակային վճարումների միջոցով՝ առանձին յուրաքանչյուր տրանշի համար,
- վարկի ժամկետ՝
- Տրանշ 1-ի ժամկետ՝ Համաձայնագրի ստորագրումից հետո 15 տարի, որից արտոնյալը՝ 4 տարի,
- Տրանշ 2-ի ժամկետ՝ տրանշի հասանելիությունից հետո 15 տարի, որից արտոնյալը՝ 4 տարի,
- վարկի օգտագործված և չմարված ամբողջ գումարի կամ դրա մի մասի տոկոսադրույքը կարելի է փոխել լողացողից ֆիքսվածի՝ ՎԶԵԲ-ի ընթացակարգերին համապատասխան (նվազագույնը՝ 5 մլն եվրո),
- վարկային միջոցների մասհանման վերջնաժամկետ՝ Համաձայնագրի ստորագրման ամսաթվից 5 տարի կամ ՎԶԵԲ-ի կողմից սահմանված և դրա մասին տեղեկացված որևէ այլ ուշ ամսաթիվ:

Այս համատեքստում, Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար կառաջացնի ֆինանսական պարտավորություններ:

Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ

Համաձայնագրի կնքումը պայմանավորված է հարկային և մաքսային վարչարարության արդյունավետության բարձրացմամբ և ենթակառուցվածքների զարգացմամբ, որը բխում է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի №1363-Ա որոշմամբ հավանության արժանացած Կառավարության 2021-2026թթ. ծրագրի հավելվածի «6 9 կետ» դրույթներից, մասնավորապես՝ հարկային և մաքսային վարչարարության կատարելագործման ռազմավարությունն ուղղված է լինելու էլեկտրոնային համակարգերի և ենթակառուցվածքների արդիականացմամբ առավել արդյունավետ համակարգ ունենալուն: Վարչարարության բարեփոխումների շրջանակում բարձրացվելու է հարկ վճարողների սպասարկման որակը: